

Թ. 118, Թղ. 149ա. «Խրատք եւ կարգ շարական քաղեւոյ՝ Ղուկաս վարդապետի Կեղեցւոյ»։ Կը գտնուի նաեւ անանուն (Հմմտ. Երեւան, Պետ. Թանգարանի Թ. 821 եւ 864)։ Առանց տարակուսի Մովսէս չէր Օրհնութեանց կից քաղուածքներ երգելու սովորութեան սկզբնապատճառը, այլ Ամթայ դպրոցէն ժառանգած էր զայն եւ բերած տնկած Հայաստան եւ հոն իւր ճոխութեամբն ընդունելի բրած։ Այս նկատմամբ ունինք գեղեցիկ վկայութիւն մը Մովսէսի աշակերտէն. Խաչատուր Վ. Կեսարացի կը գրէ իւր 1642ին ի Նոր-Ջուղայ տպագրած Ժամագրքին մէջ (էջ 700—701) այսպէս.

«Գիտասցիք, ով տօնասէրք, զի մեծ եւ երանելի Հայրապետն տէր Մովսէս, որ նորոգեաց զսուրբ Էջմիածինն, որոյ ըստ արժանոյն զովասանութիւն առաքինասէր վարուցն եւ աշխատաջան վաստակոցն որ ի վերայ կարգաց եկեղեցւոյ եւ կրօնից հաստատութեան ունէր՝ այլում թողից ասել, եւ կամ բաւական համարեալ մեր զսակաւ յառաջագոյն ասացեալսն։ — Սա ինքն վերոյասացեալ սուրբ Խայրս մեր սահմանեաց տասն շարական ասել օրհնութիւն վասն բազում խորհրդոյ տասնեակ քուոյն։ Այլ եւ վկայ ածելով զմեծ փիլիսոփայն եւ զհաւատարիմ քահանայապետն զսուրբ Ստեփաննոս, որ զԱւագ օրհնութիւններն տասն տասն շարական արար եւ ոչ աւելի կամ նուազ, ըստ տասն դասուց բանականաց. նմանապէս եւ սուրբ Հայրս կանոնեաց տասն